# Արձանագրություն թիվ 1

2018 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ 4-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը,որին ներկա էին 28 ծնող և դասվար՝ Լ.Բաբայանը:Ժողովը վարում էր Լ. Բաբայանը:

Օրակարգում՝

1.Ծնողխորհրդի ընտրության հարցը:

2.«Տաք սնունդ» ծրագրին առնչվող հարցեր:

3.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին. Ծնողխորհրդի ընտրության հարցը :

Ծնողներն առաջարկեցին ծնողական խորհրդի կազմի փոփոխություն կատարել:Քանի որ ծնողներն առաջարկեցին ձևավորել այնպիսի ծնողական խորհուրդ ,որի անդամներն այս տարիների ընթացքում չեն եղել ծնողխորհրդի անդամներ,ըստ այդմ էլ առաջարկվեցին թեկնածուներ:Ծնողների մի մասը ծանրաբեռնված լինելու պատճառով հրաժարվեց լինել ծնողխորհրդի կազմում:

Որոշեցին.-Ծնողխորհրդի կազմում ընդգրկել այն ծնողներին,ովքեր նախորդ տարիներին ընդգրկված չեն եղել այդ կազմում:Մյուս ծնողներն էլ իրենց պատրաստակամությունը հայտնեցին անհրաժեշտության դեպքում աջակցել ծնողխորհրդի անդամներին:Ծնողխորհուրդը ձևավորվեց հետևյալ կազմով.

Նախագահ՝ Թեհմինե Անտոնյան

Անդամներ՝ Անուշ Մանուկյան

Մանե Վարդանյան

Արմինե Պետրոսյան

Անժելա Հակոբյան

2.Լսեցին. «Տաք սնունդ» ծրագրին առնչվող հարցեր :

Ծնողներին ներկայացվեց ,թե այդ ծրագրի շրջանակներում ինչ է տրամադրվում դպրոցին:Ներկայացվեց նաև ,որ անհրաժեշտ է լինում ձեռք բերել ամանի հեղուկ,սպունգ,աղ և այլն:Դրա համար անհրաժեշտ է նաև ծնողների աջակցությունը:Ծնողներին ներկայացվեց նաև,որ ծրագրում գոյություն ունի <<Ծնողական ներդրում>> հասկացությունը, ըստ որի նախատեսված գումարի չափը կազմում է 100-ից 300 դրամ:

Որոշեցին.-Ծնողները քննարկեցին և որոշեցին յուրաքանչյուր ամսվա համար հավաքել 300 դրամ,որպեսզի << Տաք սնունդ >> ծրագիրն իրականացվի հավուր պատշաճի:

3.Լսեցին. Ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկ Լ. Բաբայանը: Նա նշեց, որ աշակերտներն ստացել են բոլոր անհրաժեշտ դասագրքերը,սակայն կրթությունը լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ են նաև գրենական պիտույքներ՝ տետր,գրիչ,մատիտ և այլն,որով երեխաներին պարտավոր են ապահովել ծնողները:

Որոշեցին.- Ծնողները պարտավորվեցին ապահովել երեխաներին անհրաժեշտ պարագաներով և որոշեցին հետևել ,որպեսզի երեխաները դպրոց հաճախեն ժամանակին և դասերին պատրաստ, չուշանան և անտեղի չբացակայեն դասերից:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Թ. Անտոնյան/

Քարտուղար՝ /Ա.Մանուկյան/